

Հայտարարություն

ՀՀ Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուրի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 3.1-1 / համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Տիպ՝ Համայնքային ծառայության թափուր պաշտոններ «համայնքային ծառայության մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդված Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ / Ծածկագիր՝ 3.1-1 /

1. Առաջատար մասնագետը՝

- ա/ քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է աշխատակազմի փաստաթղթաշրջանառությունը՝ կապված հարկերի, տուրքերի և վարձավճարների գանձման դինամիկայի հետ / մասնավորապես գույքահարկի, հողի հարկի վարձավճարները /, մուտքագրումը համակարգիչ,
- բ/ կատարում է գրությունների, նամակների պատասխանների տպագրում-առաքում, օպերատորական ողջ աշխատանքները,
- գ/ համակարգիչ է մուտքագրում համայնքային ծառայության թափուր տեղերի համար անցկացվող մրցույթային և ատեստավորման թեստերը և մյուս պաշտոնների թեստերը, հսկում է դրանց (փոփոխությունների հետ կապված գործընթացը և համայնքի ղեկավարի կողմից դրանց փոփոխության դեպքում փոփոխություն է կատարում համապատասխան ֆայլում),
- դ/ իրականացնում է համայնքային ծառայության հետ կապված աշխատանքները (թափուր տեղերի համար դիմորդների գործերի ընդունում, մրցույթային և ատեստավորման հանձնաժողովներին դրանց հանձնելը և այլն),
- ե/ կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով,
- զ/ ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը,
- է/ հետևում է քարտուղարի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է իր անմիջական ղեկավարին,
- ը/ իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ,
- թ/ իրականացնում է քաղաքացիների հերթագրում՝ քարտուղարի մոտ ընդունելության համար,
- ժ/ քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին,
- ի/ / քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան,
- լ/ իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ: Առաջատար մասնագետը ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքները (և կրում է) իրավական ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ)

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- 1) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- 2) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,

3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

Մրցույթը կանցկացվի 2017 թվականի 10-ին նոյեմբերի՝ ժամը 12⁰⁰, Խաչաղբյուրի համայնքապետարանում:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝ ա/ դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/

բ/տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/, վկայականի /ների/, անձնագրի պատճենները՝ բնօրինակի հետ միասին

գ/արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի:

ՀՀ քաղաքացին մրցութային մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.00-ից 18.00 մինչև 2017 թվականի հոկտեմբերի 25-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից, համայնքապետարանում / Խաչաղբյուրի/ և ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, մարզպետարանում / Գրիգոր Լուսավորչի 36 կամ Կենտրոնական հրապարակ 7/:

Մրցութային անցկացման վայրի, օրվա և ժամի հնարավոր փոփոխությունների մասին կհայտնվի լրացուցիչ՝ մրցութից առնվազն մեկ շաբաթ առաջ:

Մրցութային մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Խաչաղբյուրի համայնքապետարանի աշխատակազմ կամ ք. Գավառ, Գեղարքունիքի մարզպետարան:

Համայնքի ղեկավար՝

Ս. Գալստյան

Հեռ.՝ 094-94-87-40

Աշխատանքի վերաբերյալ հայտարարություններ